րախութիւն բոլոր ուխտաւորաց, բայց ճշմարիտ քրիստոնէի ուրախութիւնը և հոգեկան մխիթարութիւնն էր միմիայն սրբալոյս միւռոնի օրհնութիւնը. որ կը-շարժէր բազմութեան հեռաւորաց և մերձաւորաց սրտի ջերմեռանդութիւնը, ո-րոնք երեք օր տիւ և գիշեր անընդհատ կ'դիմէին 'ի համբոյր կաթսային արժա-նանալով հոգեկան շնորհաց օրհնութեան և մասանցն սրբոց, որք բազմացրած էին սեղանի յառաջ.

Ս. Աթոռոյս ժառանգաւորաց դպրո-ցի հարցաքննութեան օրը աշակերտաց ցոյց տուած յառաջադիմութեան ցու-ցակը հանդերձ ա'ռ մեզ գրուած նամա-կով կ'հրատարակեմք 'ի տեղեկութիւն ազգայնոց. և 'ի քաջալերութիւն միւս ազգային ուսումնարանաց կ'դնեմք Երե-ւանայ հայոց Օրիորդաց, Աշտարակ գիւ-ղի և Գորի քաղաքի հայոց դպրոցաց. հարցաքննութեանց օրը կարդացած ճա-ռերը, որոնք յատուկ նամակներով ու-ղարկած են մեզ հրատարակելու, որոց մէջ մասնաւոր գոհութեան արժանի է Աշտարակայ Ամենափրկիչ եկեղեցւոյ Ա-ժանապատիւ տէր Սարգիս քահանայն. որ իրենց դպրոցի վարժապետը յատուկ իւր տանը կ'խնամէ և աշակերտաց կրթու-թեանը և եկեղեցական երգեցողութեա-նը համար հոգ կ'տանի, ինչպէս որ ակա-նատես եղանք

Ուսումնասէր անձինք զանազան քա-ղաքներէ ևս յօդուածներ ուղարկած են մեզ Արարատոյ մէջ տպուելու. ո-րոնք հետզհետէ կ'հրատարակեմք ըստ յար-մարութեան նիւթոցն.

Գերապատիւ Սրբազան Եղբայր.

Եթէ կայ մեր ազգի արդի վիճակի մէջ մխիթարական և ազգօգուտ ձեռնարկու-թիւն մի՝ այն բարեկարգ դպրոցաց հիմ-նարկութիւնն է. և եթէ կայ ուրախարար հանդէս մի՝ այն հարցաքննութեան հան-դէսն է, եթէ աշակերտք տարուան շրջա-նին մէջ ժրաջան աշխատութեամբ ան-պտուղ չեն թողած իրենց մեծաւորաց և վարժապետաց ճիգը և վաստակը.

Ձեզ և բոլոր միաբանութեանս շատ լաւ յայտնի է որ մեր Վեհափառ Կա-թուղիկոսի հոգևոր գլուխ Հայաստա-նեայց եկեղեցւոյ ընտրուելէն յետոյ ըստ միահամ հաւանութեան բովանդակ Ազ-գիս՝ հոգ տարաւ Էջմիածնայ ժառան-գաւորաց դպրոցը բարեկարգելու և ուս-ման առարկաներու շրջանը ընդարձակե-լու որով ոչ միայն նորա մէջ Ռուսերէն և Գաղղիերէն լեզուները մուտ գտան, այլ և քանի մի չափահաս սարկաւագներ ևս անխոնջ ջանասիրութեամբ պարապել սկսան նոյն լեզուներով.

Ահաւասիկ Նորին Վեհափառութեան բարձր հրամանաւն էր նոյն Ուսումնարան-նի աշակերտաց հարցաքննութիւնը, որու-համառօտ նկարագրութիւնը այս գրոյս մէջ կը բովանդակեմ. Հարցաքննութիւնը

սկսաւ յունիսի 25 ին առաւօտեան 8 երրորդ ժամուն. ժողովեցան դասարանը Պերապատիւ տեղակալ Արքիս սրբազան Եպիսկոպոսը, Պալատեան, Յովհաննէս և Աղեքսանդր սրբազան Եպիսկոպոսները, Սինոդի Անդամք Թադէոս և Գրիգոր Եպիսկոպոսներ, Լիմասոլի Ազգային Անդամները, և ժողովրդականներէն պատուաւոր անձինք։ Սկսաւ կրօնական հարցաքննութիւնը, որոյ և Հայ. լեզուի Ուսուցիչնէ Պ. Պալեն Պալեանց, Աշակերտաբար իւրաքանչիւր չափս կարողութեան՝ ուղղութեամբ կ'լուծէին իրենց առաջարկուած կրօնական խնդիրները. նոյնպէս Հայերէն լեզուի մէջ բաւական վարժ հանդիսացան, երբ Պերականական և Նարտասանական կանոնագրութիւններ առաջարկուեցան իրենց, որոյ վրայ և Ուսուցիչը ստացաւ շնորհակալութիւն հանդիսականներէն։ Որովհետև իւրաքանչիւր առաւօտեան նշանակուած էր մի մի օր, միւս օրերն սկսան Պաղեստինէն և Ասորեստանէն լեզուագիտութիւն, որոց առաջնոյն Ուսուցիչն է Պ. Կ. Փոյաճեանց որ Փարիզ Ազգային Ճեմարանը կատարելագործած է ուսումը, և երկրորդին Պ. Արքիսն Նարութեան, որ Իտալիսեան Ուսումնարանին մէջ է լրացրել իւր ուսման ընթացքը։ Այս երկու լեզուաց քննութեան ժամանակ աշակերտաց հարցակ և անշփոթ պատասխաններէն կարելի էր եզրակացնել, որ այն երկու վարժապետները պարապ անցուցած չէն իրենց դասատուութեան ժամանակները, այլ դիւրըմբռնելի եղանակաւ աշխատած են իրենց գիտցածը ողջամտական ոգւով հաղորդել Ազգիս մանկանցը։ Այսր ժապետաց և Երակացուի վերայ ուրեմն նայելով աշակերտները հանդարտ և կանոնաւոր են, և զգալի ցիրով կ'աշխատին իւրեանց ուսմունքը շարունակելու։ Հարցաքննութենէն յետոյ յառաջադէմ աշակերտներէն Գրանոս Պետրոսեանը բաւական ազգու ճառ մի կարդաց, յորում կ'խոստանար՝ի դիմաց ընկերներուն արդարացնել Եհափառ Հայրապետին նոցա վերայ ունեցած սերը և հայրագորով խնամքը և օր ըստ օրէ քաջալերիչ հանդիսանալ նշանակեալ առարկաներին մէջ։ Նառը վերջանալէն յետոյ խումբ մի երաժիշտ աշակերտք իմաստալից երգ մի երգեցին՝ի պատիւ Եհափառ Կաթուղիկոսին։ Յետոյ գերապատիւ Աղեքսանդր Սրբազան Եպիսկոպոսը համառօտաբար կ'յիշեցուցներ աշակերտաց ուսման մեծամեծ օգուտները և կ'խրախուսէր զինքեանք՝ի սէր ուսման, կ'յիշեր Եհափառ Հայրապետի նոցա վերայ ունեցած խնամքը և կ'յորդորէր ապարդիւն չթողուլ նորատաղդաշնչեռ նարկութիւնները. խօսքը վերջացրուց Եհափառ Կաթուղիկոսին երկարաւոր կեանք բարեմաղթելով յօգուտ Ազգի և՝ի պայծառութիւն Այր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի, և այսպէս վերջացաւ հարցաքննութեան հանդէսը։

Գերապատիւ սրբազան եղբայր, աւե-

լորդ կ'համարիմ շատ անգամ ազգային գրութեանց մէջ կրկնուած ուսման օգուտները մանրամասնաբար յիշել այս առթիւ. միայն հաղորդելով Ձեզ բերկրութեամբ սրտի մեր ժառանգաւորաց դպրոցին վերանորոգութեան այս հաւատիքը, կ'խնդրեմ պատուական Ազգայրատ լրագրի էջերու մէջ տեղ շնորհէք սոյն գրութեանս, և աշակերտաց յաջաջադիմութեան ցուցակին։

Մնամ և պչն։
Ընդրեաս Աբեղիսկոպոս։

ԵՐԵՒԱՆԱՑ ՀԱՅՈՑԻՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՅ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՑՈՒԱԾ ՃԱՌԸ

Բարձրապատիւ Հայր. յարգելի Բաղաքացիք և Ազնուասուն Տիկնայք.

Ձեր ամենիդ դէմքի վրայ տեսնուած զուարթութիւնը, այս ազգային հանդիսից զգացած բերկրանքը՝ յայտնի նշան է որ դուք սիրելի Հայրենակի՛ցք, փոքր՞ի շատէ ճանաչումէք ուսման արժանաւորութիւնը և մանաւանդ իգական սեռի կրթութիւն փրկարար ներգործութիւնը, որ առնումէ Ազգաց և ազանց մէջ։ Բդարև սրանից աւելի մեծ՝ սրանից աւելի քաղցր՝ սրանից աւելի փառաւոր ուրախութիւն չի կարող լինել այն անձանց համար՝ որոնք զգում են և ճանաչում են Ազգի բարոյական և մտաւոր զարգացման արժէքը։

Ազնիւ Հայրենակի՛ցք, դուք հարազատ որդի էք այն երանելի Սուրբ վարդապետին, որ սրանից 1400 տարի յառաջ մեր խեղճ Ազգի գլխին եկած փորձութիւններու վրայ լացած ժամանակը՝ գիտութեան գերազանցութիւնը և տգիտութեան վատթարութիւնը ուղղելով հասկացնել ասումէր, "գիտութիւնն է մայր բարեաց և տգիտութիւնը ծնող չարեաց", և դարձեալ թէ՝ "մոքով կոյր լինելը աչքով կոյր լինելուց վտանգաւոր է, վասնզի կոյրը արեգակն ճառագայթներին է զրկուում, իսկ տգէտը կատարեալ կեանքից"։ Յոյս ունիմ որ դուք այս խօսքերի ճշմարտութեանը քաջ համոզուած էք. դուք կուզէք որ ձեր զաւակները մոքով կոյր չըմնան, կուզէք որ գիտուն բարեկիրթ ու Աստուածապաշտ լինին. մէկ խօսքով կուզէք որ մեր իմաստուն և պարկեշտասուն առաքինաբոյր հինգերորդ դարու հայ կաղանց արժանի թոռներ լինին. որոց բարեմասնութեան վրայ զմայլմամբ խօսումէ քաղցրախօսն Լազարէ. լսեցէ՛ք ինչէ ասում Լուսաւորչի ականաւոր Աբեղեանը թէ մայրական քնքուշ գրկաց մէջ կը հանգչի Ազգաց ոգին. բարքը նախապաշարումը, առաքինութիւնը մէկ խօսքով մարդկութեան բարձր քաղաքակրթութիւնը։. կրկնումէ դարձեալ նոյն հեղինակը թէ։ "Ճշմարիտ վայելչութիւնը այնէ որ մարմնոյ պճնաշարդութիւնից յառաջ հոգին զարդարուի, որովհետև ամենայն բան կատարեալ գործողը հոգինէ"։. սակայն պետք չէ՛ մոռանալ սիրելի հայրենակիցք որ մի ժողովրդեան հոգևոր ու բարոյական կրթութիւնը հետևաբար և ազգութիւնը նախ ի՛ւր կրնքից և լեզուից